ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՊՀ տ.գ.թ., դոցենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՑՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հասարակության պատմությունը իր բազմաթիվ ելևէջներով արդարության համար առաջատար ուժերի պայքարի պատմություն է: Հին ժամանակներից մինչև մեր օրերը մարդիկ ձգտել են պաշտպանել իրենց իրավունքները ունեցվածքի, ներդրած միջոցների, աշխատանքի, նյութական և հոգևոր բարիքների նկատմամբ:

Պատմական զարգացման ընթացքում փոխվում են արդարության հասկացության ինչպես իմաստը, այնպես էլ դրսևորման ձևերը: Հանդես գալով տնտեսական տարբեր իրավիճակներում՝ արդարությունն իր տարբեր ընկալումներն է դրսևորում առանձին սոցիալական խմբերի, սեփականության իրավունքի տարբեր մակարդակների, տարբեր երկրների իրավական նորմերի և այլնի տեսակետից: Սակայն, մի բան պարզ է, որ արդարության գաղափարը ի վերուստ հաստատված բարոյատնտեսական կատեգորիա է և ավել կամ պակաս չափով գնահատվել է բոլոր առումներով և բոլոր ժամանակներում:

Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել *արդարության* հասկացության տարբեր, երբեմն նույնիսկ միմյանց հակասող բնութագրություններ: Օրինակ՝ Օ.Գ.Դրոբեցկին արդարությունը համարում է կոնկրետ հասկացություն, առավել բարդ, քան հասարակական իդեալն է: Նա գտնում է, որ արդարությունն՝ իր մեջ ամփոփում է բարու հասկացությունը՝ իհարկե այն ավելի կոնկրետացնելով (միշտ չէ, որ բարին բարի է, կարևոր է տվյալ իրավիճակի գնահատումը): Հեղինակը արդարությունը դիտում է որպես երկու և ավելի հանգամանքների համատեղություն[1]: Դա ճիշտ դիտողություն է, քանզի պահանջում է յուրաքանչյուր տվյալ դեպքում պարզաբանել արդարության էությունը՝ այն համադրելով այլ տարբեր իրողությունների հետ: Այդ բնութագիրը ընդունելի է նաև այն տեսակետից, որ արդարությունը դիտարկվում է պահի իրադրության պահանջով, ունի գործնական անհրաժեշտ կողմեր: Նման բնութագրությունը միաժամանակ կատեգորիան ընդունում է շարժման ու զարգացման ընթացքի մեջ, երբ երեկ ճանաչված արդարությունը այսօր կարող է այլ կերպ գնահատվել և ընդհակառակը, այսինքն՝ ճանաչված արդարությունը դիտվում է ոչ թե որպես չափանիշ (эталон), այլ նպատակին հասնելու շարժում: Դրանով իսկ հեղինակը իրավացիորեն անընդունելի է համարում տվյալ հարցի մասին այլ մտածողների կողմից գաղափարի մեկընդմիշտ տրված մոտեցումը:

Նախ նշենք, որ չենք կարող համաձայնել այն հեղինակների հետ, որոնք աներկբա ճշմարիտ են համարում արդարության սկզբունքներն իրականացնելու դասակարգային մոտեցումը և արդարության գիտական վերլուծությունը կապում են հիմնականում մեկ դասակարգի շահերի հետ՝ նրան համարելով առաջադիմության կրողը և նրա շահերից բխեցնում մյուս «ստորադաս» դասակարգերի ու ամբողջ հասարակության շահերը: Սա հարցի մարքսիստական մոտեցումն է, որը աղերսներ չունի դրա գիտական ըմբռնումների հետ: Նույնիսկ, եթե որևէ դասակարգ պատմական առումով կյանքի է կոչված՝ մեծ առաքելություն իրականացնելու համար, ապա դա չի նշանակում, որ արդարության օբյեկտիվ իրողությունն իր տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ ձևով ներկայանալու է առավելապես տվյալ դասակարգի պահանջով, իսկ մյուսներն ապրելու են նրա մեծահոգի ողորմածությամբ:

---

[1] Дообецкий О.Т. Проблемы нравственности. М. 1977. стр. 57.

Հանրահայտ է Սմիթի խոսքը առ այն, որ «ոչ մի հասարակություն անկասկած չի կարող ծաղկել ու երջանիկ լինել, եթե նրա անդամների մեծ մասը աղքատ է ու դժբախտ»[1]:

Տնտեսագիտության մեջ հայտնի հավասարական («Էգալիտար») տեսության կողմնակիցները գտնում են, որ արդար է այն հասարակությունը, որտեղ, օրինակ, եկամուտները բաշխվում են հավասար՝ ըստ «արժանիքների»: Տվյալ դեպքում հարց է առաջանում՝ ինչպես կարելի է, որոշել նորածին երեխայի կամ կյանքի դժվարագույն վիճակում հայտնված հիվանդ ու դժբախտ ծերունու «արժանիքները», ուրիշ բան է, եթե խոսք լիներ աշխատանքային կամ դրա հետ կապված մարդու այլ արժանիքների մասին:

Ուտալիտարիստները գտնում են, որ պետությունը պարտավոր է մշակել օրենսդրություն հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնելու մասին, որը իրենց կարծիքով կառաջացնի երևույթի համաչափություն և կապահովի բնակչության մեծ մասի ցանկությունը: Նման պարագայում անշուշտ անտեսվում են (ամբողջությամբ կամ մասամբ) յուրաքանչյուր անհատի առանձնահատուկ ջանքերն ու դերը:

Ըստ ամերիկացի փիլիսոփա Ջոն Ռոուլսի «Արդարության տեսության»՝ պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղվի ամենաաղքատների վիճակը բարելավելուն և հասարակության միջոցները բացառապես դրան ուղղորդելուն: Սակայն, տվյալ դեպքում կարող են վնասվել աշխատունակ, ակտիվ բնակչության շահերը: Ի հակակշիռ Ջ.Ռոուլսի, ամերիկյան լիբերալիզմի ներկայացուցիչները (Ռ.Նոզիկ և ուրիշներ) գտնում են, որ պետությունը իրավունք չունի, օրինակ, եկամուտները վերցնել բնակչության մեկ խմբից և բաժանել մյուսներին, որ դրանով կխաթարվի արդարության գաղափարը, ուրեմն նաև եկամուտների առավել արդյունավետ ձևավորումն ու դրանց բաշխումը: Այդպիսին է ազատ շուկայի պահանջը, և այն հաշվի չառնելը մեծապես կվնասի առաջընթացին:

Հետաքրքիր է նաև Եվրոպայի մի շարք երկրներում (Շվեդիա, Դանիա, Նորվեգիա և այլն) կիրառվող «Սոցիալ-դեմոկրատական» մոդելը, համաձայն որի պետության խնդիրը համընդհանուր բարեկեցություն ապահովելն է, որ չնայած պետությունն ու շուկան միասնական են, սակայն անհրաժեշտության պարագայում պետությունն իր վրա է վերցնում բնակչության տարբեր խավերի նյութական (և այլ) ապահովվածության բեռը[2]:

Ըստ Ա.Մարկոսյանի՝ պետությունը քաղաքական կազմակերպություն է, որն արտահայտում է առավելապես գերիշխող սոցիալական խմբի շահերը կամ այդ խմբի շահերի փոխզիջումային տարբերակն է[3]: Կարծում ենք, որ նման բնորոշումը քիչ է տարբերվում մարքսիստական ուսմունքի մեջ կարևորված «պետության հեղափոխական դերի» գնահատականներից, ըստ որի պետությունը զենք է տիրող դասակարգի ձեռքին հակառակորդ դասակարգի դեմ: Ժամանակակից զարգացած երկրների պատմությունը վկայում է նման բնորոշումների՝ մեղմ ասած անկենսունակությունը:

Ինչպես նկատում ենք, խնդրո առարկան վիճահարույց է և ունի ճշմարտությունը գնահատելու անցնելիք ճանապարհ: Միայն նշենք, որ հասարակությունն իր շարժման ընթացքում, առաջնորդվում է ոչ թե սուբյեկտի՝ մարդու (կամ պետության) առաջադրած, այլ պատմականորեն ձևավորված տնտեսական երևույթների պահանջներով, և որ հասարակական կյանքի բոլոր կովանները կարող են կատարել իրենց դերը՝ միայն հետևելով դրանց իմացության ու դրանք կիրառելու կարողության վրա:

Արդարության հակադարձ գաղափարը անարդարությունն է, որը նույնպես որոշակի է և բխում է պատմական ժամանակաշրջանի պահանջներից: Պայքարը անարդարության դեմ

---

[1] Смит А., "Исследование о природе и богатства народов,. Антология экономической классики предисловие И.А.Столярова, М. МП. "Эконом" 1993. стр. 146.

[2] "Курс экономический теории" под редакций Чепурина М.Н. Киров 2001.

[3] Ա. Մարկոսյան, Տնտեսական անվտանգության հիմնական խնդիրները, Ե. 2005, էջ 73:

արդարության հաղթանակն է, այն ճանաչելու և հաստատելու անհրաժեշտությունը: Ընդ որում արդարության համար պայքարի հասունացումը անհանդուրժելի է դարձնում անարդարության գոյությունը, և ինչպես Տակվիլն է ասում. «Համբերությամբ հաղթահարվող անխուսափելի չարիքը անտանելի է դառնում այն մտքից, որ դրանից կարելի է ազատվել»[1]: Ուրեմն արդարության հաստատումը հնարավոր է դառնում դրա համար անհրաժեշտ պայմանների հասունացումով միայն: Ուստի, արդարության գնահատականը որոշվում է տվյալ պատմական ժամանակաշրջանի պահանջներով՝ նկատի առնելով երևույթի անցյալը, ներկան և ապագայի հեռանկարը: Հասկանալի է նաև, որ միայն որոշակի ժամանակաշրջանում արդարության բնորոշումն ու կիրառումը կարող է կործանարար լինել ապագայի համար, կամ միայն ապագայի հեռանկարով տարվելը կարող է անդարձ կործանել ինչպես ներկա, այնպես էլ ապագայի հեռանկարը (այդպես եղավ մեզ մոտ, երբ «ժամանակավոր դժվարությունները» դիմագրավելով՝ վնասեցինք ոչ միայն ներկային, այլ նաև ապագային):

Արդարությունը ներառում է սոցիալ-տնտեսական այն հարցերը, որոնց առնչվում է մարդը իր կենսագործունեության ընթացքում: Կարող ենք թվարկել դրանցից մեկ փունջ՝ մարդու կրթությունն ու որակավորումը, նրան համապատասխան աշխատանքով ապահովելը, նրա աշխատանքի քանակին ու որակին համապատասխան վարձատրությունը, ընդհանուրին պատկանող գումարներից օգտվելու հնարավորությունը և այլն: Ուստի հասկանալի է, որ արդարությունը նյութական և հոգևոր բարիքներով մարդու տարբեր պահանջմունքների բավարարումն է: Այդ դեպքում միայն հասարակությունը ամբողջությամբ հնարավորություն կունենա խոսել մարդասիրական գաղափարները իր կողմից ընդունելու և իրացնելու վիճակի մասին:

Այս տեսակետից կարևորվում է պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղվածությունը.

1. հասարակության մեջ արդարության իրավական պաշտպանությունը,
2. սոցիալական ապահովվածության համակարգի ստեղծումը,
3. բարեկեցության աճին անհրաժեշտ պայմանների խրախուսումը,
4. եկամուտների աճին ուղղված քաղաքականության իրականացումը:

Վերոհիշյալի ճշմարտացիությունը վիճարկվում է հարցի վերաբերյալ ժամանակակից տեսությունների գնահատականով:

Դեռևս բազմաբնույթ հեղափոխություններից շատ առաջ, պարզ էր, որ մարդկանց վարքագծի ձևավորումը և նյութական բարիքները բաշխելու կարգը վճռականորեն կախված են արտադրությունը կազմակերպելու եղանակից, բաշխման արդարացի սկզբունքները ի վերջո իրացնելու հնարավորությունից՝ պայմանավորված մարդու կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ նյութական և հոգևոր արժեքների առկայությամբ: Ուստի կարևոր է նաև թեմայի հետ խոր առնչություններ ունեցող երևույթի մարդկանց կենսագործունեության տնտեսագիտական վերլուծությունն իր տարբեր դրսևորումներով:

Մարդկանց կենսագործունեության ձևը, որպես որոշակի պատմական դարաշրջանի արդյունք, ինքն իր հերթին հետադարձ ազդեցություն ունի դրա վրա, արգելակում կամ ընդհակառակը՝ նպաստում է դրա փոփոխությանը: Այդ առումով էլ առաջին պլանի վրա է մարդու աշխատանքային կենսագործունեությունը՝ որպես բնության մեջ միայն մարդուն հատուկ հատկանիշ, միաժամանակ՝ մարդկային ցեղի գոյության ու աճի (նաև զարգացման) հիմնական նախապայման:

Աշխատանքային կենսագործունեությունը կարևոր է ոչ միայն նրանով, որ ստեղծում է մարդու գոյությունն ապահովող նյութական և հոգևոր բարիքներ, այլ նաև այն պատճառով, որ միայն աշխատանքի շնորհիվ են զարգանում և իրացվում մարդու ներուժը, նրա ընդունակությունները: Փոխելով իրեն շրջապատող բնությունը, աշխարհը՝ մարդը ստեղծագործում է և

[1] Таквуль "Старый порядок и революция". М., 1896, стр. 197.

միաժամանակ փոխում ինքն իրեն, իր պահանջմունքները և դրանք բավարարելու իր հնարավորությունները:

Հասնելով ինքնահաստատման՝ մարդը ձևավորում է իր աշխատողի այնպիսի որակ (ընդունակություններ), որը համապատասխանում է հենց իր կողմից ստեղծված աշխատանքի միջոցների բնույթին ու մակարդակին, արտադրությունը կազմակերպելու ձևերին, շրջապատին առնչվելու և ուրիշների հետ համատեղ գործունեությանը:

Ուրեմն, ***տնտեսական արդարությունը մարդու կենսագործունեությունը իրացնելու ճանապարհին նյութական և հոգևոր բարիքների ստեղծումն·ու դրանց արդարացի յուրացումն*** է: Այսպիսով, մարդու գործողությունների ակտիվությունը, աշխատանքի արդյունքների նկատմամբ նրա աճող վերաբերմունքը, հասարակության մեջ առանձնահատուկ դերը ձևավորում են մարդկային գործոնի մտավոր ու ֆիզիկական ունակությունների ամբողջությունը: Փաստորեն, մարդ անհատը դառնում է հասարակական ուժ, աշխատանքը կազմակերպելու, գլխավորելու, իրականացնելու և ընդհանրապես կյանքը բարեփոխելու նրա դերակատարումը, որի քաղաքական, սոցիալ-տնտեսական և բազմաթիվ ու բազմաբովանդակ հարցերը լուծելու ճանապարհը բարդ է, երբեմն հակասական, նույնիսկ անբացատրելի դրանց նկատմամբ տարբեր ընկալումների և վերաբերմունքի պատճառով: Սա բացատրվում է ոչ միայն մարդու առանձնահատուկ բնույթով, այլ նաև համակարգային փոփոխություններով, քանզի «... ոչ մի համակարգ, այդ թվում և հասարակությունն ու մարդը, պատահականություններից, անհավասարաչափություններից, անկայունությունից ապահովագրված չեն: Ձևավորվում են նոր կառուցվածքներ, որոնք իրենց հետ բերում են համակարգային նոր բնութագրություններ: Իսկ դա նշանակում է, որ ելակետային համակարգի բնութագրությունը արմատապես փոխվել է, ուրեմն և ներկայի ու ապագայի միջև գծային ձևով տեղակայման սցենարը մերժվում է: Դա վերաբերում է գրեթե բոլոր սոցիալ-տնտեսական երևույթներին, մարդու կողմից դրանց ընկալումներին ու գնահատականին»[1]: Ուստի առանձին սոցիալական խմբի և առավելապես անհատ մարդու համար արդարության գաղափարը ընդհանուր գծերով վերացական հասկացություն է, մինչդեռ ճշմարտության հասնելու, դրան տիրապետելու և այն իր նպատակներին համահունչ դարձնելու մարդու ճանապարհը նրա հավաքական ուժն է՝ հասարակության մեջ ունեցած դիրքը: Ինչ վերաբերում է արդարության հարցում մարդու դերին, ապա նրա խնդիրն է դիտել որպես

տնտեսական
սոցիալական
քաղաքական-իրավական
պատմական
ազգային
և այլ կողմերի } .... արդարություն

Այդ իմաստով էլ արդարության հարցի քննարկումը միանշանակ, որպես սոցիալական արդարություն, ներառում է սոցիալական տարբեր խավերի կամ մարդու գոյատևության միայն սոցիալական պայմանները (առողջապահության, կրթության, բնակարանի և այլ գործոններ), չի կարող բնութագրել այդ կատեգորիայի համապարփակ բովանդակությունը[2]: Բացի այդ, բոլորովին էլ անհրաժեշտություն չկա սինթեզելու դրա տարբեր ձևերը մեկ ընդհանուր հասկացության մեջ: Ընդհակառակը, տարբեր ձևերի ճանաչումն ու օգտագործումն ավելի նպատակասլաց կդարձնեն առարկայի ուսումնասիրությունը և մեզ կմոտեցնեն արդարության գաղափարի էությունը բացահայտելուն: Ուրեմն, արդարությունը պետք է դիտարկել վերևում ներկայացված

[1] Վ.Կանկե, Փիլիսոփայություն, Ե., 2001, էջ 260:
[2] Ինչպես արվում է ներկայումս սոցիալական արդարության տակ հասկանալով նշված գրեթե բոլոր ձևերը:

ձևերին համապատասխան՝ որպես հասարակական կյանքի տնտեսական արդարություն, նաև որպես սոցիալական, քաղաքական, իրավական, հոգևոր, պատմական, ազգային և այլնի դրսևորում: Արդարության նշված տարբեր ձևերը միմյանց հետ սերտ փոխկապակցության մեջ են, լրացնում են իրար և անհրաժեշտության դեպքում, հանդես գալով միասին, ստեղծում են նրա կուռ, միասնական բովանդակությունը: Այսպես, եթե խոսքը տնտեսական արդարության մասին է, որը կարող է հանդես գալ որպես անձնական, կոլեկտիվ ու հասարակական շահերի ճանաչում, դրանց զուգակցում, ապա դա իր անմիջական արտահայտությունն է ստանում հասարակության, խմբի կամ առանձին անհատի տնտեսական վիճակի մեջ: Հասկանալի է, որ յուրաքանչյուրի և բոլորի տնտեսական շահի անհրաժեշտությամբ միայն կյանքի կոչված արդարացի քաղաքականությունը կարող է նպաստել տնտեսական արդարությունը առավել լիարժեք իրացնելուն: Իսկ գործնականում այդ քաղաքականության ներդրումը հնարավոր է դառնում արդարության իրավական՝ գիտականորեն հիմնավորված նորմերի մշակմամբ ու կիրառմամբ: Կարևորը տնտեսական կյանքում արդարության գնահատումն ու իրականացումն է, դրա նկատմամբ հասարակության անաչառ վերաբերմունքը, ընդհանուր առաջադիմության մեջ նրա դերի ճանաչումը:

Բացի այդ, արդարության երևույթի առավել ճշմարտացի պատկերն ստանալու համար անհրաժեշտ է նրա առանձին ձևը ուսումնասիրել մյուս բոլոր ձևերի հետ կապի, դրանց փոխազդեցությունների անընդհատ զարգացող գործընթացի մեջ: Դա հասարակության, նրա կենդանի տնտեսական օրգանիզմի պահանջն է, քանզի դրա բոլոր մասերի գոյատևումն ու ներդաշնակ զարգացումը պահանջում են յուրաքանչյուրի առողջ, լիարյուն գործողությունը:

Չի բացառվում նաև անհատի, կոլեկտիվի կամ հասարակության կյանքն ուսումնասիրելիս արդարության իրացումը պարզել նրա երկու և առավել ձևերի համատեղ քննարկման միջոցով: Օրինակ, բնակչության բարեկեցության կամ կենսամակարդակի ցուցանիշի քննարկումը կպահանջի ինչպես տնտեսական (եկամուտներ, գներ և այլն), այնպես էլ սոցիալական (աշխատանքային, բնակարանային պայմաններ, առողջապահության, կրթության և այլն) մոտիվների համատեղ ուսումնասիրություն, արդարության տնտեսական ու քաղաքական կամ քաղաքական ու իրավական ձևերի զուգակցում: Նման պարագայում կունենանք առաջին դեպքում սոցիալ-տնտեսական արդարության, երկրորդ դեպքում՝ տնտեսական-քաղաքական ճշմարտությունը բացահայտելն ու բնակչության մեծամասնության արդարացի շահերը պարզաբանելը, դրանց իրավական արտացոլումը: Օրինակ, ղարաբաղյան խնդրի արդարացի մեկնաբանությունը պետք է դիտել ինչպես տնտեսական-իրավական, այնպես էլ տնտեսական-քաղաքական արդարության տեսակետից: Մեկ պարագայում հարցը բացատրվում է բնակչության տնտեսական վիճակի, նրա նյութական ու հոգևոր անբարենպաստ պայմանների, տնտեսական անարդարության, ազգային ճնշումների և դրանք պահպանելու քաղաքական մոտեցումների և մյուս դեպքում՝ Ադրբեջանի կողմից շարունակվող անարդարացի, ամեն գնով իրավական վիճակը պահպանելու պահանջով: Ուստի ամբողջ բնակչության կամ նրա որևէ խավի կյանքի ու դրա արդարացի պայքարի արդյունքը կստացվի տնտեսական, սոցիալական, ինչպես նաև իրավական արդարությունը զուգորդելու, դրանց բոլոր անհրաժեշտ կողմերը համադրելու միջոցով: Տվյալ դեպքում բնակչության եկամուտները ձևավորող միտումները կպահանջեն վիճակի քննարկումը ներկայացնել ոչ միայն տնտեսական, այլ նաև հարցի իրավական կողմի ճշմարտությունը մեկնաբանելու հետ միասին: Գլխավորը արդարության գաղափարի հաստատումն է, դրա ճանաչումը և իրագործումը, որը սակայն սոցիալական տարբեր խավերի կամ մարդկանց կողմից գնահատվում է երբեմն հակասական մոտեցումներով, առանձնահատուկ վերաբերմունքով: Ուստի, ընդհանրապես արդարությունը գնահատելու ելակետը տվյալ պահին մարդու գոյության արժանավայել պայմանների ստեղծումն է: Այսպես, բնակչության եկամուտների մասին իրավական պատկեր ստանալու, մարդկանց միջև դրանց արդարացի բաշխումը իրացնելու խնդիրները լուծելիս անհրաժեշտ է ունենալ հարցը ուսումնասիրելու և կյանքի կոչելու համապատասխան մոտեցում,

նախ՝ եկամուտների չափը և երկրորդ՝ սոցիալական խմբերի առանձնացումը: Այդ առթիվ տնտեսագիտության մեջ ընդունված են եկամուտները ձևավորելու և բաշխելու վերաբերյալ ***ֆունկցիոնալ և անձնական*** մոտեցումները: Եկամուտների ֆունկցիոնալ բաշխումը երկրում նոր ստեղծված ազգային եկամտի բաշխումն է արտադրության տարբեր գործոնների սեփականատերերի միջև: Դրա շնորհիվ պարզվում է, թե «ազգային կարկանդակի» որ մասն է կազմում աշխատավարձը, տոկոսը, շահույթը, ռենտային եկամուտը և այլն, այսինքն՝ աշխատանքի, կապիտալի, ձեռնարկատիրության, հողի բերած եկամուտները: Անձնական բաշխումը ազգային եկամտի բաշխումն է երկրի քաղաքացիների միջև՝ անկախ արտադրության վերոհիշյալ գործոնների նկատմամբ նրանց սեփականության իրավունքից: Այդ պարագայում կարելի է պարզել, թե դրամական արտահայտությամբ նոր ստեղծված արժեքի ինչ քանակություն են ստանում, օրինակ՝ տաս տոկոս ամենաաղքատները և տաս տոկոս ամենահարուստները: Սակայն, թվերի մերկապարանոց ցուցադրումը պակաս արդյունավետ է և կարող է ներկայանալ կամ որպես «ոգևորող», կամ «հուսահատեցնող երևույթ, մինչդեռ խնդիրը մակրոչափանիշով տնտեսական երևույթների պարզաբանումն է և ճշմարտության բացահայտումը: Այդ առումով հետաքրքիր է իտալացի սոցիոլոգ Վիլֆրեդո Պարետոյի «ռեսուրսների արդյունավետ բաշխման» տեսությունը, ըստ որի՝ շուկայի որևէ մասնակից չի կարող բարելավել իր վիճակը՝ չվատացնելով մյուսներինը, և եթե որևէ մեկի վիճակը բարելավվում է՝ չվնասելով մյուսին, ապա այդպիսի բաշխումը արդյունավետ չէ: Պարետոն գտնում է, որ շուկան փակ համակարգ է, և մակրոմակարդակով (+)-ը և (-)-ը միմյանց հավասարակշռում են և արդյունքում բաշխման արդյունավետությունը հասարակական օգտակարությունն է[1]: Նման մոտեցումը արդարացվում է նրանով, որ նժարի ծանր կողմը՝ հարստության աճը, մեկ բևեռում ինքնանպատակ չէ, որը հնարավոր է դարձնում մեծացնել ամբողջական առաջարկը և ավելի շատ մարդկանց տնտեսական գործունեության մեջ ընդգրկել և դրանով ամբողջական առաջարկի, ուրեմն նաև պահանջարկի նոր, առավել բարձր հարաբերակցություն սահմանել և միաժամանակ առաջադիմություն ապահովել:

Հարցի վերաբերյալ որոշակի փորձեր են արվել Բ.Վ.Ռակիտսկու և Ա.Ն.Շոխինի կողմից, որոնք եկամուտների բաշխման հիմքում ընդունել են դրանց ձևավորման բնույթը և ըստ այդմ էլ խմբավորել[2].

1. պետության կողմից բաշխման հարաբերությունների սկզբունքի ոչ հետևողական կիրառմամբ ձևավորված եկամուտներ (եկամուտների չհիմնավորված աճ),
2. աշխատանքային ներդրումներից չբխող եկամուտներ (խնայբանկի և այլ բանկերի ավանդների դիմաց տոկոսավճարների, հողից ստացվող եկամուտների մեծ գումարի ժառանգությունից ստացված և այլ եկամուտներ),
3. անհատական կամ խմբային գործունեությունից ստացված աշխատանքային ներդրումների եկամուտներ, որոնք գերազանցում են միջին եկամուտները,
4. պատահական կամ վերաբաշխված եկամուտներ (վերավաճառք, ծառայողական դիրքի չարաշահում և այլն),
5. պետական միջոցների անօրինական յուրացումներ (հափշտակումներ, ֆիկտիվ արժեքների սահմանում, չգրանցված արտադրություն և այլն):

Նշված դասակարգումը երկրում տնտեսական արդարություն հաստատելու նպատակ ունի՝ տարաբաժանել աշխատանքային և անաշխատ եկամուտները, դրանց շարժի միտումները և որ ամենագլխավորն է՝ դրանք հաստատելու կամ սահմանափակելու համար գործողությունների անհրաժեշտությունը: Սակայն, վերոհիշյալ դասակարգումն ամբողջությամբ գրեթե չի ընդգրկում բնակչության եկամուտների կազմում առավել մեծ բաժինը՝ աշխատանքային

---

[1] "Курс экономический теории" под редакций Чепурина М.Н. Киров 2001. АСА 2001, стр. 304-305.

[2] Б.В.Ракитский, А.Н.Шохина. Закономерности формирования и реализации трудовых доходов при социализме. М.Наука, 1987, стр. 256-257.

եկամուտները, այլ նկատի է առնում հիմնականում բաշխման հարաբերությունների ձևերն ու եկամուտները, մինչդեռ պետության խնդիրն է պարզել եկամուտներ առաջացնող աղբյուրների յուրաքանչյուր ձևը, դրանց վարքի գնահատումը: Այդ առումով ընդունելի են այն մոտեցումները, որոնք հասարակական կյանքի տնտեսական անվտանգությունն ապահովելու հարցում հատկապես կարևորում են ստվերային տնտեսության ու կոռուպցիայի առկայությունը: Այսպես, ընդունելով, որ երևույթը առկա է տնտեսության զարգացման տարբեր մակարդակի երկրներում և իրենց առանձնահատուկ ձևերով ու մեծ ծավալով խոչընդոտում են տնտեսական առաջադիմությունը, համաձայնվենք Համաշխարհային բանկի եզրակացությանը, որ Հայաստանը նույնպես գտնվում է այն երկրների շարքում, որոնց հիմնական խնդիրը կոռուպցիայի, հատկապես դրա վարչական ձևի մեծ մասնաբաժինն է: Դրա հաղթահարումը չափազանց դժվար է, քանզի առնչվում է երևույթը բացառելուն կոչված պետական մարմիններին: Այս առումով հետաքրքիր (և մի փոքր նաև զարմանալի) են Ջ.Քեյնսի «Տնտեսական հնարավորություններ մեծ թոռների համար» աշխատության հետևյալ մտքերը. «Երբ հարստության կուտակումն այլևս չունենա սոցիալական մեծ նշանակություն, բարոյականության օրենքների մեջ տեղի կունենան մեծ փոփոխություններ: Մենք ի վիճակի կլինենք ձերբազատվելու բազմաթիվ կեղծ բարոյական սկզբունքներից, որոնց մղձավանջների հատկանիշներից մի քանիսը բարձրացրել-հասցրել ենք բարձրագույն առաքելության կարգավիճակին (....): Բայց զգույշ եղեք: Այս ամենի ժամանակը դեռ չի եկել: Առնվազն մեկ հարյուրամյակ ևս մենք պետք է համոզենք ինքներս մեզ և բոլորին, թե արդարությունը ստորություն է, իսկ ստորությունը՝ արդարություն, քանի որ ստորությունը շահավետ է, իսկ արդարությունը՝ ոչ: Այս ավելի երկար ժամանակ պետք է լինեն մեր ասածները, քանի որ միայն դրանք կարող են տնտեսական անհրաժեշտության թունելից մեզ առաջնորդել դեպի լույսը»[1]: Մեկնաբանություններն ավելորդ են: Բոլոր ժամանակներում՝ այդ թվում նաև ներկայումս, արդարության բեռի ծանրությունը ավել կամ պակաս չափով ընկած է պետության ուսերին, իր քաղաքացիների «կյանքի ապահովության» խնդիրները լուծելու և դրանք առաջ տանելու անհրաժեշտության գիտակցումով, որը սակայն մեծ մասամբ ունեցել է օրենսդրական «հիմնավորում»՝ ելնելով իշխանավորների շահերից: Ուստի քաղաքակիրթ հասարակության մեջ (որպիսիք այժմ կան և բացառություն չեն) իրական ***Արդարության*** ճանաչումն ու գնահատումը, դրա համար պայքարի դժվարին խնդրի իրականացումը, պետության օրենսդիր, գործադիր, իրավական մարմինների, ամբողջ բնակչության խնդիրն է՝ կոչված ծառայելու սոցիալական պետության տնտեսական (նաև բարոյական) հիմքերն ամրապնդելու գործին, ընդհուպ մինչև անհատի և հասարակության շահերի մերձեցում: Արդյունքում՝ ***յուրաքանչյուրի և բոլորի*** տնտեսական շահերով ու բարոյական նորմերով արդարացի վերաբերմունքի ձևավորումը միայն կարող է նպաստել գաղափարը ամբողջ հասարակության լիարժեք սեփականությունը դարձնելուն և երկիրը առաջ տանելու ճանապարհին առկա դրամական և նյութական բոլոր միջոցները արդարացի բաշխելուն (որի համար ինչպես Ջ.Քեյնսն է նշում, ժամանակ է պետք): Հասկանալի է, որ տնտեսական արդարությունը միշտ և ամենուրեք իր վրա է կրելու առաջադիմության ծանր բեռը: Հարցը առավել խորությամբ ուսումնասիրելու և ներկայացնելու համար կարելի է նաև կատարել բնակչության եկամուտների տարբերակում՝ որպես տնտեսական տարբեր երևույթների հետ դրանց առնչությունները ձևավորող առանձին հնարավորությունների դրսևորում: Առաջարկվում է հետևյալ մոտեցումը.

---

[1] Կ.Ա.Թորես, Քաղաքացիության երկընտրանքները գլոբալ աշխարհում, Ե., 2005, էջ 112:

աշխատավարձ ըստ
սոցիալական խմբերի
տնտեսության ճյուղերի
բնակչության սեռատարիքային
կազմի
տերիտորիալ հատկանիշի
կրթության (որակավորման)
տրանսֆերտ վճարներ ըստ
սոցիալական խմբի
տերիտորիալ հատկանիշի
ընտանիքի կազմի

խմբային սեփականությունից եկամուտներ ըստ
սոցիալական խմբերի, կրթության (որակավորման)
տնտեսության ճյուղերի տերիտորիալ հատկանիշի
անձնական տնտեսությունից եկամուտներ ըստ
սոցիալական խմբերի
տերիտորիալ հատկանիշի
կրթության (որակավորման)
ընտանիքի կազմի
բնակչության սեռատարիքային կազմի
մասնավոր սեփականությունից եկամուտներ ըստ
սոցիալական խմբի
տերիտորիալ հատկանիշի
տնտեսության ճյուղերի

Առաջարկվող սխեմայով բնակչության հիմնական եկամուտները ձևավորելու, բաշխելու և վերաբաշխելու վերլուծությունը թույլ կտա յուրաքանչյուրի դեպքում պարզել տնտեսական արդարության նյութական նախադրյալների առկայությունը և դրանք օգտագործելու հասարակության հնարավորությունը (ժամանակի մեջ տնտեսությունների շարժը և հեռանկարը): Խնդիրն այն է, որ պարզաբանվի տարբերությունների պատճառները (գոնե հիմնական գծերով), ցույց տրվի, օրինակ՝ գյուղատնտեսության մեջ արդյունաբերության համեմատ եկամուտների մակարդակի տարբերությունները ըստ տեխնիկական զինվածության աստիճանի, ճյուղի նկատմամբ պետության ուշադրության, աշխատանքները նորովի կազմակերպելու կամ բնական գործոնի դերը և՛ այլն: Մարդկանց եկամուտների վերաբերյալ ամենատարբեր բացատրություններ կարելի է բերել ըստ տերիտորիալ (բնակավայրի), կրթության, ճյուղային և այլ հատկանիշների: Օրինակ, տարբեր են եկամուտները ըստ մեծ, միջին և փոքր քաղաքների՝ նկատի առնելով դրանցում առկա առանձնահատուկ պայմանները, աշխատատեղերը, բնակչության սեռատարիքային կազմը, արտադրության մեջ կամ այլ բնագավառներում կանանց, կենսաթոշակառուներին ընդգրկելու հնարավորությունը, տրանսֆերտ վճարների կամ անհատական տնտեսության ընձեռած հնարավորությունների խնդիրները և այլն: Կարևորը բնակավայրերի բնակչության եկամուտների աճի հնարավոր տարբերակների որոշումն ու դասակարգումն է, դրանց միջև վարձատրության զգալի փոփոխությունների բացահայտումն ու հիմնավորումը: Հարցի տնտեսական քննարկումը պահանջում է պարզել մարդու կենսագործունեությունը ծավալելու համար անհրաժեշտ նրա պահանջմունքների, դրանց տարբեր մակարդակների ու դրանք բավարարելու համար եկամուտների ընձեռած հնարավորությունները:

Եկամուտների ձևավորումը, դրանց իրացումը մարդու առանձնաշնորհն է, որը դրսևորվում է կյանքի ընթացքում առաջացած և մշտապես վերընթաց գծով բարձրացող պահանջմունքները բավարարելու չդադարող ընթացքով: ***Պահանջմունքները նյութական և հոգևոր բարիքների նկատմամբ մարդու գիտակցված ցանկությունն է: Որքան զարգացած է մարդ անհատը, որքան տեղյակ է արտաքին աշխարհի իրողությանը, այնքան մեծ են նրա պահանջմունքները առավել բարձր մակարդակով բավարարելու իր ցանկությունը:***

Շուկայական տնտեսության պայմաններում մարդու պահանջմունքները բավարարելու հիմնական ուղին եկամուտների առկայությունն է, և որքան դրանք մեծ են, այնքան հեշտ են բավարարվում, սակայն երբեք չեն հասնում պահանջմունքները բավարարելու «սահմանին», քանզի ամեն մի «սահման» նոր պահանջմունքների սկիզբ է, առավել բարձր մակարդակ, որին մարդը տվյալ պահին ի զորու չէ տիրելու: Ինչ վերաբերում է հասարակական պահանջմունքներին, ապա այն որոշվում է երկրի ներուժի հնարավորություններով, ռեսուրսների առկայության

և դրանք օգտագործելու մակարդակով, և որքան մեծ են դրանք, այնքան լայնահուն ու բազմազան են նյութական բարիքներ ստեղծելու և պահանջմունքները բավարարելու ուղիները: Խնդիրը ժամանակակից մակարդակով առկա ներուժի օգտագործումն է ի շահ հասարակության տնտեսական արդարության:

Տարբեր մակրոտնտեսական ցուցանիշները (երկրի ներուժի, դրա աճի, եկամուտներ գոյացնող տնտեսության ճյուղային կառուցվածքի, բնակչության թվաքանակի ընտանիքի միջին մեծության, միջին աշխատավարձի, գյուղի և քաղաքի տնտեսական տարբերությունների և այլնի) պարզաբանումով: Դա բավական բարդ համակարգ է, քանզի առնչվում է ոչ միայն անհատի ձգտումներն իրացնելու հասարակության հնարավորություններին, այլև բազմաթիվ տնտեսական ու քաղաքական, ներքին և արտաքին ազդակներին, ինչպես նաև հարցի վերաբերյալ պետության վերաբերմունքին: Ինչևէ, առայժմ ամբողջությամբ չունենալով բնակչության սոցիալ-տնտեսական բևեռացման հետ կապված եկամուտների տարբեր մակարդակների համեմատություն կատարելու լիարժեք հնարավորություն, փորձենք անդրադառնալ առկա վիճակի գործընթացներին և դրանց գնահատումներին: Այսպես, տնտեսագիտությունը երկրի առաջադիմությունը գնահատում է ՀՆԱ-ի չափերի և դրա աճի տեմպերի մակարդակով:

Օրինակ՝ ՀՀ գյուղատնտեսության մասնակցությունը ՀՆԱ-ի մեջ 2005թ. 427.2 մլրդ դրամ էր, իսկ վերամշակող արդյունաբերության մեջ՝ 303.7 մլրդ դրամ, մինչդեռ ճյուղերում համապատասխանաբար՝ 35 և 61.5 հզ. դրամ էր:

Նկատի ունենալով նշված բնագավառների տեխնիկական զինվածության, աշխատանքի արտադրողականության, նյութական և աշխատանքային ներդրումների հնարավորությունները և տնտեսական գործունեության առանձնահատկությունները՝ միևնույն է, եկամուտների նման տարբերությունը արդարացի չէ և անկախ հիմնավորումներից՝ մտահոգիչ է: Այդ առումով գտնում ենք, որ գյուղի աշխատավորները հայտնվել են անարդար վիճակի մեջ, որը, սակայն, ունենալով իր օբյեկտիվ (նաև սուբյեկտիվ) պատճառները, անհրաժեշտաբար հաղթահարվելու է, այլապես գյուղատնտեսությամբ զբաղվող միլիոնավոր մարդիկ և նրանց ընտանիքի անդամները շարունակաբար կգտնվեն ցածր կարգի տնտեսական վիճակի մեջ:

Համոզված ենք, որ գյուղատնտեսության (և հողի) նկատմամբ առկա միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը, հարցի վերաբերյալ պետական հոգատարությունը ի վիճակի են երկրի տնտեսությունը կարգավորել, ուրեմն նաև բնակչության տարբեր խավերի կենսապահովումը համահարթել և դուրս բերել զարգացման առավել բարձր մակարդակի վրա: Այդ առումով ուշագրավ է Հոլանդիայի, Չինաստանի և մի շարք այլ երկրների փորձի ուսումնասիրությունը:

Աղյուսակ 1

	1996	2003	2004	2005	2006
Բոլոր տնային տնտեսությունները միջինը մեկ շնչի հաշվով ամսական, դրամ, ընդամենը	11968	133324	14450	15949	18446
այդ թվում՝					
աշխատանքի վարձատրություն	2787	7355	8167	9680	11415
(% ընդհանուրի մեջ)	23	55.2	56.5	60.7	61.9
սոցիալական տրանսֆերտներ	798	1321	1962	2253	2559
(% ընդհանուրի մեջ)	7	9.9	13.6	14.1	13.9
եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	3358	1727	1632	1647	1825
(% ընդհանուրի մեջ)	28	13.0	11.3	10.3	9.9
այլ դրամական մուտքեր	5025	2921	2689	2369	2647
(% ընդհանուրի մեջ)	42	21.9	18.6	14.9	14.3

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրության տարեգիրք (ՀՎՏ), 2007, էջ 89:

Պարզվում է, որ անցած մեկ տասնամյակում Հայաստանի բնակչության ամսական դրամական եկամուտները (մեկ շնչի հաշվով) աճել են ավելի քան 50 %-ով: Ցանկալին այն է, որ առավել մեծ աճ են ցուցաբերում աշխատանքի վարձատրությունը և սոցիալական տրանսֆերտները, որի հետևանքով բարձրացել է նաև դրանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (առաջինը մոտ երեք և երկրորդը՝ մոտ երկու անգամ):

Դրվատանքի է արժանի նաև բնակչությանը մատուցվող սոցիալական տրանսֆերտների փոփոխությունը, որը մեկ շնչի հաշվով վերջին տաս տարում աճել է ավելի քան երեք անգամ և 2006-ին կազմել մեկ մարդու ընդհանուր եկամուտների 13.9%-ը և ամսական կազմել 2559 1996-ի 798-ի դիմաց:

Կարծում ենք, որ բնակչության ընդհանուր տնտեսական վիճակի մեջ առկա է եկամուտների աճի միտում, սակայն արդյո՞ք դա բավարար է երևույթին դրական գնահատական տալու առումով: Մի բան պարզ է, որ այդ տարիներին մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները աճել են 105.5 %-ով, իսկ ծախսերը՝ 1037.7 %-ով:

Սակայն միաժամանակ նշենք, որ երևույթը անհրաժեշտ դրամական անդրադարձ չի ունեցել բնակչության իրական եկամուտների վրա, քանզի ապրանքային շուկայում միայն 2001-2006 թթ. կատարվել է սպառման առարկաների գների 17 % աճ, այդ թվում պարենային և ոչ պարենային ապրանքների գծով համապատասխանաբար 17.0 և 20.5 %:

Խնդրո առարկան բարդ է և պահանջում է պետության գործուն միջամտություն, առանձնապես շուկայի գործողություններին հետևելու, հնարավորինս նաև միջամտելու ակտիվ տնտեսական լծակներ կիրառելու միջոցով:

Պետության կարևորագույն խնդիրներն առնչվում են ոչ միայն օրենսդրական դաշտը ձևավորելու և դրան համապատասխան երկրի տնտեսական խնդիրները լուծելու, այլ նաև բնակչության սոցիալական տարանջատվածությունը. սեփականատերերի, աշխատավոր զանգվածների, կենսաթոշակառուների, բազմանդամ ընտանիքների, գյուղի և քաղաքի բնակչության և այլնի արդարացի կենսաձևերը ապահովելու և շարունակական դարձնելու առաքելությանը: Կարծում ենք, որ այս բոլորին զուգահեռ պետությունը պարտավոր է ուշիուշով հետևել երկրի բնակչության կյանքի միջին տևողության փոփոխություններին, բնական և մարդկային ներուժը արդարացի օգտագործելուն, ընդլայնված վերարտադրություն ապահովելու ինովացիոն զարգացումների խնդիրներին, նշվածին համընթաց մոտակա և գալիք տարիների տնտեսական կանխատեսումներին, դրանք՝ անհրաժեշտ ճանապարհով ուղղորդելուն, առաջադրված հարցերը լուծելու ընթացքին, նաև կառավարման օղակների որակյալ, շահագրգիռ աշխատանքին:

Կարծում ենք, որ տնտեսական, քաղաքական մոտեցումների հիմնավորված երկխոսությունը, կիրառումը, միաժամանակյա համապատասխան կիրառումը կարևորագույն երաշխիք կդառնա երկրում սոցիալ-տնտեսական արդարություն հաստատելու ճանապարհին: